

**<<ԻՔՄ-ԹԻՎԻ>> ՍՊԸ-ի ԿՈՂՄԻՑ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ ՄԱԼՈՒԽԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՄԻՋՈՑՈՎ
ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՏՐԱԳՐԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐԸ

1.1. Սույն Ծառայությունների մատուցման հիմնական Պայմանագրով սահմանում են <<ԻՔՄ-ԹԻՎԻ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ <<ԻՔՄ-ԹԻՎԻ>> ՍՊԸ) կողմից Բաժանորդներին մալուխային ցանցի միջոցով հեռուստառադիոհորատների հեռարձակման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները:

1.2. Սույն Պայմանագիրը հանդիսանում է հրապարակային առաջարկ (օֆերտա), որն ընդունելու (ակցեպտավորելու) պահից հանդիսանում են Օպերատորի և Բաժանորդի (երկուսը միասին համատեղ հիշատակման դեպքում այսուհետ կանվանվեն՝ Կողմեր) միջև կնքված՝ Կողմերի համար պարտադիր ուժ ունեցող Հիմնական պայմանագիր: Օպերատորին ներկայացված համապատասխան դիմումը և/կամ սույն պայմանների կատարմանն ուղղված գործողությունների կատարումը համարվում է սույն օֆերտայի պայմանների ընդունում (ակցեպտավորում):

1.3. Սույն Պայմանագիրը դիմումի և Օպերատորի կողմից սահմանված կիրառելի կանոնների, կարգերի և սակագների (գնացուցակի) հետ միասին կհանդիսանան Օպերատորի և Բաժանորդի միջև կնքված՝ Հիմնական պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

2. ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Ներքո շարադրյալ սահմանումները սույն Պայմանագրում ունեն հետևյալ նշանակությունը.

2.1. <<Ծառայություն>>՝ մալուխային ցանցի միջոցով Օպերատորի կողմից մատուցվող հեռուստառադիոհորատների հեռարձակման ծառայություն, որի մանրամասն նկարագրությունը հրապարակված է Օպերատորի պաշտոնական վեբ կայքում:

2.2. <<Հեռուստառադիոհեռարձակման/վերահեռարձակման ծառայություն մատուցող (Օպերատոր)>>՝ <<ԻՔՄ-ԹԻՎԻ>> ՍՊԸ, գրանցված՝ 2018թ. Փետրվարի 27-ին, գրանցման համար՝ 271.110.1007526, ՀՎՀՀ՝ 01280592, գտնվելու վայր՝ ՀՀ, քաղաք Երևան, Կոմիտասի պողոտա 49/4, վեբ կայք՝ www.realtv.am:

2.3. <<Ծառայության ակտիվացման օր>>՝ Սարքավորման տեղադրման, կարգաբերման և Օպերատորի Ցանցին միացման օր:

2.4. <<Ցանց>>՝ <<ԻՔՄ-ԹԻՎԻ>> ՍՊԸ-ին կողմից օգտագործվող հաղորդման համակարգ, իսկ համապատասխան դեպքերում նաև միացնող-անջատող կամ ուղղորդող սարքավորումներ և այլ ռեսուրսներ, որոնք թույլ են տալիս ազդակներ (սիգնալներ) հաղորդել մալուխով, ռադիոյով, օպտիկական կամ այլ ամրակցված ցանցով և շարժական կապի երկրային ցանցով այնպես, որպեսզի դրանք օգտագործվեն ազդակների հաղորդման համար՝ անկախ հաղորդվող տեղեկատվության տեսակից:

2.5. <<Սարք>>՝ Օպերատորի կողմից Բաժանորդին օգտագործման իրավունքով տրամադրված սարք՝ իր պատկանելիքներով և մալուխ, որոնց միջոցով Բաժանորդին հնարավորություն է ընձեռվում օգտվել Օպերատորի Ծառայություններից:

2.6. <<Սակագնային պլան/փաթեթ>>՝ որոշակի հատկանիշներով օժտված Ծառայություն, որն ընտրում է Բաժանորդը:

2.7. <<Օպերատորի ցանցի հասանելիության տարածք>>՝ աշխարհագրական այն կոնկրետ վայրը (տարածքը), որտեղ տեխնիկապես հասանելի է Օպերատորի կողմից մատուցվող Ծառայությունը:

2.8. <<Բաժանորդ>>՝ ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով Օպերատորի ցանցի հասանելիության տարածքում Օպերատորի կողմից առաջարկվող Ծառայություններից օգտվելու համար սույն պայմանների պահպանմամբ միացել է Պայմանագրին:

2.9. <<Դիմում>>՝ Պայմանագրի կողմ դառնալու ու Օպերատորի կողմից առաջարկվող Ծառայություններից օգտվելու համար ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից լրացված, ստորագրված և Օպերատորին ներկայացված, վերջինիս կողմից սահմանված ձևի գրավոր փաստաթուղթ:

2.10. <<Պահանջվող փաստաթղթեր>>՝ Բաժանորդագրության պայմանագիր կնքելու համար Բաժանորդ դառնալու ցանկություն ունեցող անձի կողմից Դիմումի հետ մեկտեղ ներկայացվող փաստաթղթեր:

2.11. <<Զանգերի կենտրոն>>՝ ծառայություն, որի միջոցով Բաժանորդը զանգահարելով +37491195265, +37494195265, +37455195265 հեռախոսահամարներով, կարող է Օպերատորի կողմից մատուցվող Ծառայությունների վերաբերյալ տեղեկություններ ստանալ:

2.12. <<Բիլինգային համակարգ>>՝ հաշվարկների իրականացման ավտոմատացված տեղեկատվական համակարգ, որի միջոցով հաշվառվում են Բաժանորդին մատուցված Ծառայությունների տեսակը, ծավալը, արժեքը և հաշվարկվում Բաժանորդների պարտքերը և ստացված վճարումները:

2.13. <<Բաժանորդի անձնական գրասենյակ>>՝ բիլինգային համակարգում վարվող անալիտիկ հաշիվ, որն օգտագործվում է Բաժանորդին մատուցվող Ծառայությունների տեսակների, ծավալների, արժեքների և դրանց դիմաց գանձվող վճարումների հաշվառման համար:

2.14. <<Նույնականացման համար (ID)>>՝ տառերի և/կամ թվերի համակցություն, որն օգտագործվում է Բաժանորդի նույնականացման և Բաժանորդի կողմից իր անձնական հաշիվ մուտք գործելու ու վճարումներ կատարելու համար: Բաժանորդի ID-ին՝ փոփոխման ենթակա չէ: ID համարը տրամադրվում է Օպերատորի գործընկեր՝ <<ՌեալԹայմ>> ՍՊԸ-ի կողմից:

2.15. <<Տեխնիկական հնարավորություն>>՝ էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովելու համար Բաժանորդին՝ Օպերատորի հեռահաղորդակցության ենթակառուցվածքներին միանալու հնարավորություն:

2.16. <<Հաշվետու ժամանակաշրջան>>՝ օրացուցային ամիս, որի ընթացքում մատուցվել են ծառայություններ:

2.18. <<Օրացուցային ամիս>>՝ հաշվետու ժամանակահատված, որի գործողությունն սկսվում է հաշվարկային ժամանակաշրջանի յուրաքանչյուր օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 00:00-ին և ավարտվում է նույն ամսվա վերջին օրվա ժամը 23:59:59-ին:

2.19. <<Բաժանորդի տարածք>>՝ վայր, որտեղ Բաժանորդը ցանկանում է ստանալ Ծառայությունը:

2.20. <<Վաճառքի և սպասարկման սրահ>>՝ Օպերատորի կողմից սահմանված Ծառայության վաճառքի և Բաժանորդների սպասարկման համար նախատեսված սրահ:

2.21. <<Տուժանք (տուգանք, տույժ)>>՝ տուժանք է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու,

ներառյալ՝ կատարման կետանցի դեպքերում: Տուժանք վճարելու պահանջի դեպքում պարտատերը պարտավոր չէ ապացուցել, որ իրեն վնաս է պատճառվել:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն Պայմանագիրն ընդունվում (ակցեպտավորվում) է սույն Պայմանագրում սահմանված ձևով ու կարգով ստորագրված Դիմումը Օպերատորին ներկայացնելու փաստով:

3.2. Դիմումն ընդունելուց հետո, եթե Բաժանորդի կողմից պահպանվել են սույն Պայմանագրի բոլոր պահանջները, Բաժանորդի տարածքում, Օպերատորի մասնագետների կողմից հնարավորինս սեղմ ժամկետներում տեղադրվում և կարգաբերվում է Սարքավորումը և միացվում Օպերատորի Ցանցին՝ Օպերատորի կողմից մատուցվող Ծառայությունը պատշաճ կերպով ստանալու համար:

3.3. Ծառայությունների ցանկը, Սակագնային Պլանները/Փաթեթները ընտրվում են Բաժանորդի կողմից և Բաժանորդն իրավունք ունի Օպերատորի կողմից սահմանված կարգին համապատասխան փոփոխելու դրանք՝ ստորագրելով համապատասխան դիմումը և ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթերը:

3.4. Օպերատորի կողմից մատուցվող Ծառայության Սակագնային Պլանների/Փաթեթների առանձնահատկությունները, բնույթը, նկարագրությունը, դրանց նկատմամբ կիրառվող սակագները և զեղչային առաջարկները մանրամասնորեն ներկայացված են Վաճառքի և սպասարկման սրահներում և/կամ Օպերատորի վեբ կայքում:

3.5. Այլ բան սահմանված չլինելու դեպքում Ծառայությունը մատուցվում է շուրջօրյա, առանց ընդհատումների:

3.6. Օպերատորը պարտավորվում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները Ծառայության անխափան աշխատանքն ապահովելու նպատակով: Այնուամենայնիվ Բաժանորդը սույնով ընդունում է, որ Ծառայության մատուցումը և դրա որակը կախված է ոչ միայն Օպերատորից, այլ նաև Օպերատորի հսկողությունից դուրս գտնվող հանգամանքներից, որոնց համար Օպերատորը պատասխանատվություն չի կրում:

3.7. Ցանցի վերանորոգման, ընդլայնման, ամրապնդման և/կամ պրոֆիլակտիկ աշխատանքների կատարմամբ պայմանավորված՝ Օպերատորը, նախապես Պաշտոնական վեբ կայքում համապատասխան տեղեկություն զետեղելուց և/կամ իր կողմից ընդունելի այլ ձևով Բաժանորդին ծանուցելուց հետո, իրավունք ունի ժամանակավորապես դադարեցնել Ծառայության մատուցումը:

3.8. Ցանկացած դեպքում Ծառայության մատուցման թերությունները վերացնելու նպատակով Բաժանորդը պարտավոր է թույլ տալ Օպերատորի ներկայացուցչին աշխատել Ցանցի, Սարքի, այլ սարքավորումների վրա, սահմանաբաժան կետի վրա:

3.9. Ծառայության մատուցման թերությունների վերացման ծախսերը կրում է Բաժանորդը, եթե թերություններն առաջացել են Բաժանորդի մեղքով:

3.10. Ծառայությունը մատուցվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքներին, ենթաօրենսդրական ակտերին և Օպերատորին տրված լիցենզիային համապատասխան:

3.11. Ծառայությունների մատուցումը կարող է սահմանափակվել կամ ընդհատվել վերանորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքների ժամանակ, որոնց մասին, հնարավորության դեպքում, Օպերատորը պետք է նախօրոք տեղեկացնի Բաժանորդին:

3.12. Սույն Պայմանագիրը և որոշ այլ փաստաթղթեր, որոնց Բաժանորդը կարող է ծանոթանալ և ձեռք բերել Օպերատորի վեբ կայքից, Բաժանորդի կողմից չպահանջելու դեպքում թղթային տարբերակով վերջինիս չեն տրամադրվում:

3.13. Բաժանորդն իրավունք չունի Օպերատորից ստացած Ծառայությունը վերավաճառել այլ անձանց:

3.14. Օպերատորն իրավունք ունի մերժել Բաժանորդին Ծառայությունների մատուցումը, եթե մերժումը պայմանավորված է Օպերատորի տեխնիկական հնարավորությունների բացակայությամբ, երբ Դիմումում նշված Ծառայությունների մատուցման աշխարհագրական տարածքը դուրս է Ցանցի հասանելիության տարածքի սահմաններից կամ պահանջում է չհիմնավորված ծախսեր, երբ Բաժանորդը Դիմումի հետ մեկտեղ չի ներկայացրել Պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև՝ եթե Ծառայության մատուցման ցանկալի հասցեում մեկ այլ Պայմանագրի շրջանակներում արդեն մատուցված Ծառայության դիմաց կան չմարված պարտավորություններ, և այդ անձինք ընդհանուր տնտեսական շահ ունեն:

3.15. Դիմումի մերժման պատճառների մասին Օպերատորը պարտավոր է 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում հայտնել Բաժանորդին: Օպերատորը Բաժանորդին մերժման մասին ծանուցում է այն հեռախոսային կապի միջոցով կամ էլեկտրոնային փոստով, որը Բաժանորդը նշել է իր գրավոր Դիմումի մեջ: Գրավոր ձևով մերժման մասին ծանուցումն Օպերատորը հանձնում է Բաժանորդին իր Վաճառքի և սպասարկման սրահում կամ փոստով՝ Բաժանորդի կողմից Դիմումում նշված հասցեով: Դիմումի մերժման վերաբերյալ ծանուցումը ներկայացնելու/ստանալու պահից Պայմանագիրը համարվում է լուծված:

3.16. Օպերատորի կողմից Ծառայության մատուցումը պահանջում է Բաժանորդի տարածքում Սարքի տեղադրում: Տեխնիկական հնարավորությունների առկայության և սույն Պայմանագրի պահանջները բավարարելու դեպքում Բաժանորդի կողմից Դիմումը և Պահանջվող փաստաթղթերն Օպերատորին ներկայացնելու օրվանից մինչև 15 (տասնհինգ) օրվա ընթացքում Օպերատորը պարտավոր է Բաժանորդի տարածքում տեղադրել համապատասխան Սարքը և միացնել Ցանցին:

3.17. Պայմանագրի գործողության ավարտից հետո Բաժանորդը պարտավոր է 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Օպերատորին վերադարձնել վերջինիս կողմից տրամադրված Սարքն իր պատկանելիքներով, ինչը հավաստվում է Կողմերի միջև կնքված հանձնման-ընդունման ակտով:

3.18. <<ԻՔՍ-ԹԻՎԻ>> ՍՊԸ-ն իրավասու է ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքել ՀՀ օրենսդրությամբ չարգելված պայմանագիր, որի հիմքով պայմանագրի կողմ հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պարտավորվում է <<ԻՔՍ-ԹԻՎԻ>> ՍՊԸ հանձնարարությամբ, անունից ու հաշվին մատուցել ծառայություններ, մասնավորապես՝ վերջինիս կողմից մատուցվող հեռուստատեսային ծառայություններին միանալու համար կազմել և Բաժանորդներից ընդունել Դիմումներ, դրանք փոխանցել <<ԻՔՍ-ԹԻՎԻ>> ՍՊԸ ստուգմանը, իր կողմից մատուցվող ծառայությունների, սակագների վերաբերյալ Բաժանորդներին տրամադրել խորհրդատվություն, ապահովել վերջնակետային սարքավորումների բնականոն աշխատանքը:

3.19. Օպերատորի կողմից Բաժանորդի հեռախոսահամարին հաղորդագրություն կամ էլեկտրոնային հասցեին նամակ ուղարկելու, կամ Օպերատորի պաշտոնական վեբ կայքի միջոցով, կամ որևէ այլ գրավոր եղանակով վերջինիս պարբերաբար համապատասխան փոփոխությունների և այլն նորությունների/իրազեկումների վերաբերյալ տեղեկատվություն ուղարկելու պահից, Բաժանորդը համարվում է պատշաճ ծանուցված և տեղեկացված՝ անկախ այն հանգամանքից՝ Բաժանորդը ծանոթացել է, թե՛ ոչ:

3.20. Բաժանորդի հեռախոսահամարի կամ էլեկտրոնային փոստի հասցեի, անձնական տվյալների ցանկացած փոփոխության դեպքում, վերջինս պարտավորվում է այդ մասին

անհապաղ որևէ կերպ տեղեկացնել Օպերատորին, հակառակ դեպքում Օպերատորը որևէ պատասխանատվություն չի կրում:

3.21. Բաժանորդի մահվան, դատարանի վճռով մահացած հայտարարվելու, անհայտ բացակայող, սահմանափակ գործունակ կամ անգործունակ ճանաչվելու դեպքում, սույն Բաժանորդագրության պայմանագրով ամրագրված պարտավորությունները փոխանցվում են նրա իրավահաջորդ/ներին՝ մինչև վերջինիս լուծումը:

3.22. Օպերատորը պարտավոր չէ պայմանագրի լուծումից հետո 6 (վեց) ամսից ավելի ժամկետով պահպանել Բաժանորդի տվյալների, մատուցած ծառայության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն:

4. ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

4.1. Պայմանագիրը կնքելու համար Բաժանորդ դառնալու ցանկություն ունեցող անձի կողմից Դիմումի հետ մեկտեղ ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

ՀՀ քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձը պարտավոր է ներկայացնել նշյալ փաստաթղթերից որևէ մեկը՝

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող փաստաթուղթ,
- լիազորագիր և լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթ:

ՀՀ քաղաքացի չհանդիսացող (օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ) ֆիզիկական անձը պարտավոր է ներկայացնել նշյալ փաստաթղթերից որևէ մեկը՝

- անձը հաստատող փաստաթուղթ,
- ՀՀ տարածքում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ,
- լիազորագիր և լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթ:

4.2. **Իրավաբանական անձը** պարտավոր է ներկայացնել՝

- պետական միասնական գրանցամատյանից քաղվածքի կամ պետական գրանցման վկայականի պատճենը՝ հաստատված իրավաբանական անձի կնիքով (կնիքի առկայության դեպքում),
- հարկ վճարողի հաշվառման համարը (եթե չի նշված պետական գրանցման վկայականում),
- իրավաբանական անձի վավերապայմաններ (հասցե, բանկային տվյալներ, գործող հեռախոսահամար, էլ-փոստի հասցե),
- իրավաբանական անձի անունից հանդես եկող լիազորված անձի լիազորագիրը և անձը հաստատող փաստաթուղթը:

4.3. **Անհատ ձեռնարկատերը** պարտավոր է ներկայացնել՝

- պետական միասնական գրանցամատյանից քաղվածքի կամ պետական գրանցման վկայականի պատճենը՝ հաստատված իր կնիքով (կնիքի առկայության դեպքում),
- հարկ վճարողի հաշվառման համարը (եթե նշված չէ պետական գրանցման վկայականում),
- անհատ ձեռնարկատիրոջ անձը հաստատող փաստաթուղթը կամ իր անունից հանդես եկող լիազորված անձի լիազորագիրը և անձը հաստատող փաստաթուղթը:

4.4. Բաժանորդի կողմից Օպերատորին ներկայացված փաստաթղթերով հավաստվող տվյալների փոփոխության դեպքում Բաժանորդը պարտավոր է 30 (երեսուն) օրվա ընթացքում այդ մասին հայտնել Օպերատորին և ներկայացնել գործող տվյալները հավաստող փաստաթղթերը:

4.5. Անհրաժեշտության դեպքում, Օպերատորի պահանջով Բաժանորդը և/կամ նրա լիազորված ներկայացուցիչը պարտավոր է ներկայացնել նաև Օպերատորի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր:

5. ՍԱՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 5.1. Սարքավորումը, մալուխը և դրանց պատկանելիքներն ու մասերը հանձնվում են Բաժանորդին Կողմերի միջև կազմված կատարողական ակտով և ետ են վերցվում նրանից վերադարձի ակտով, որոնք կազմում են Պայմանագրի անբաժանելի մասը:
- 5.2. Օպերատորի կողմից տրամադրվող Սարքավորումը, մալուխը, ինչպես նաև դրա պատկանելիքներն ու մասերը և/կամ դրանց վրա Օպերատորի կողմից կատարված ցանկացած փոփոխություն կամ վերանորոգում, համարվում է Օպերատորի սեփականությունը և Բաժանորդը չի կարող այն փոխանցել, վարձակալությամբ տրամադրել կամ փոփոխության ենթարկել որևէ կերպ, եթե այլ բան գրավոր ձևով համաձայնեցված չէ Կողմերի միջև:
- 5.3. Սարքավորման սխալ օգտագործման, պատահական կորստի, վնասվածքի կամ հափշտակության ռիսկը փոխանցվում է Բաժանորդին՝ Սարքավորումն ընդունելուց և կատարողական ակտն ստորագրելուց հետո:
- 5.4. Սարքի կորստի կամ հափշտակության դեպքում Բաժանորդը պարտավորվում է դրա մասին, ոչ ուշ քան 7 (յոթ) օրվա ընթացքում զգուշացնել Օպերատորին այդ մասին՝ գրավոր նամակի տեսքով, ինչպես նաև վճարել դրա արժեքը:
- 5.5. Նոր Սարքավորման տրամադրումը բաժանորդագրումից հետո տրամադրված Սարքավորման կորստի, հափշտակության կամ վնասման դեպքում հնարավոր է միայն Բաժանորդի կողմից Սարքավորման դիմաց դրա արժեքը վճարելուց հետո:
- 5.6. Օպերատորը պարտավորվում է Բաժանորդին տրամադրված Սարքավորումն անվճար փոխարինել նորով, եթե Օպերատորի կողմից այն ճանաչվել է արտադրական թերություն ունեցող:
- 5.7. Օպերատորի կողմից Սարքավորումը վերադարձնելու պահանջը ստանալու պահից Բաժանորդը պարտավորվում է այլևս չօգտագործել Սարքավորումը և այն հնարավորինս սեղմ ժամկետներում հանձնել Օպերատորին:
- 5.8 Օպերատորն իրավունք ունի Բաժանորդի տարածքում Ցանցային միացումներ կատարելու համար Բաժանորդից պահանջել միացման վճար, եթե Օպերատորի կողմից օգտագործված նյութերի քանակը և կատարված աշխատանքների ծավալը գերազանցում են Օպերատորի կողմից կիրառվող սահմանագիծը:
- 5.9. Օպերատորը պատասխանատու չէ իր կողմից տրամադրված Սարքի միջոցով Բաժանորդին պատճառված վնասի համար, եթե դա տեղի է ունեցել Բաժանորդի կողմից Սարքի ոչ պատշաճ օգտագործման արդյունքում:

6. ՍԱԿԱԳՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 6.1. Ծառայության նկատմամբ կիրառվում է Բաժանորդի կողմից ընտրված Սակագնային Պլանի/Փաթեթի համար Օպերատորի կողմից սահմանված սակագները, որոնք հրապարակված են Օպերատորի վեբ կայքում և ներկայացված են Վաճառքի և սպասարկման սրահներում:
- 6.2. Ծառայության դիմաց վճարումները կատարվում են կանխավճարային կամ հետվճարային եղանակով:
- 6.3. Բաժանորդը վճարումները իրականացնում է տերմինալներով՝ օգտագործելով Օպերատորի գործընկեր՝ «ՌեալԹայմ» ՍՊԸ-ի, կողմից տրամադրված ID համարը կամ գրանցված հեռախոսահամարը:
- 6.4. Կանխավճարային բաժանորդագրության դեպքում, Բաժանորդը պարտավոր է յուրաքանչյուր ամիս մինչև տվյալ ամսվա ամսի 5-ը կատարել կանխավճարի վճարումներ,

որոնց բացակայության դեպքում, Օպերատորն իր հայեցողությամբ, առանց ծանուցման, կարող է արգելափակել Ծառայությունից օգտվելու հնարավորությունը:

6.5 Հետվճարային (ապառիկ) բաժանորդագրության դեպքում, Բաժանորդի կողմից վճարումը կատարվում է մինչև հաջորդ ամսվա ամսի 15-ը ներառյալ: Վճարումները սահմանված ժամկետում չստանալու դեպքում, Օպերատորն իրավունք ունի կասեցնել Ծառայությունը, ինչը, սակայն, հիմք չէ վճարային պարտավորությունը չհաշվարկելու և չվճարելու համար:

6.6. Օպերատորը կարող է փոփոխության ենթարկել Բաժանորդների կողմից Ծառայության դիմաց վճարումների կարգը, ժամկետները և եղանակը:

6.7. Բաժանորդի օգտին վճարում կատարող ցանկացած անձ, վճարումներ կատարելու մասով, համարվում է Բաժանորդի կողմից պատշաճ կերպով լիազորված և վերջինիս անունից գործող:

6.8. Որևէ վճարում սույն պայմաններով սահմանված ժամկետից Բաժանորդի կողմից ուշացվելու դեպքում, Օպերատորն իրավունք ունի իր սեփական հայեցողությամբ ու առանց Բաժանորդին նախօրոք ծանուցման միակողմանի կասեցնել մատուցվող Ծառայությունները, ինչպես նաև ապամոնտաժել իր Սարքավորումները:

6.9. Օպերատորն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել Ծառայության մատուցման արժեքը, ինչպես նաև Սակագնային պլանները/փաթեթները, Ծառայությունների ցանկը, դրանց մատուցման պայմանները, սակագները և կանոնները՝ այդ մասին պատշաճ՝ իրեն հարմար և Բաժանորդին հասանելի որևէ կերպ ծանուցելով Բաժանորդներին:

6.10. Օպերատորը կարող է գանձել վճար՝ կասեցված Ծառայությունները վերակտիվացնելու կամ ապամոնտաժված Սարքավորումը կրկին տեղադրելու և Օպերատորի ցանցին վերամիացնելու համար:

6.11. Սակագնային պլանի համար սահմանված վճարից բացի, հեռուստատեսային առանձին ծառայությունների, այդ թվում՝ տեսավարձույթի դեպքում Բաժանորդից կարող են գանձվել հավելյալ վճարներ՝ Օպերատորի վեբ կայքում տեղադրված և/կամ Վաճառքի և սպասարկման սրահներում ներկայացված պայմաններին և սակագներին համապատասխան:

6.12. Բաժանորդի կողմից կամ անունից իր մեղքով ID հաշվին առցանց էլեկտրոնային վճարային համակարգերի միջոցով կատարված սխալ մուտքագրումը վերջինիս կողմից վճարման անդորրագրով ու անձը հաստատող փաստաթղթով Օպերատորի ցանկացած վաճառքի և սպասարկման սրահում գրավոր դիմում ներկայացնելուց հետո, հնարավորինս սեղմ ժամկետներում Օպերատորի կողմից ենթակա է շտկման, իսկ Օպերատորը պատասխանատվություն չի կրում դրա հետևանքով Բաժանորդի կրած վնասների համար:

7. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Օպերատորը պարտավոր է՝

7.1.1. Բաժանորդին տրամադրվող Ծառայությունն ակտիվացնել սույն Պայմանագիրը կնքելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում՝ հաշվի առնելով առկա տեխնիկական հնարավորությունները:

7.1.2. Սույն Պայմանագրով Ծառայության մատուցումն ապահովելու համար Բաժանորդին կատարողական ակտի հիման վրա օգտագործման իրավունքով հատկացնել անհրաժեշտ Սարքավորումը, որը Ծառայության մատուցման դադարեցման դեպքում, անկախ դադարեցման պատճառներից, ենթակա է վերադարձման:

7.1.3. Բաժանորդին տրամադրել ճշգրիտ տեղեկատվություն՝ Օպերատորի ցանցի հասանելիության, Բաժանորդի կողմից ընտրված Սակագնային Պլանով/Փաթեթով

նախատեսված Ծառայության առանձնահատկությունների, հատկանիշների, Ծառայության մատուցման պայմանների և այլնի մասին:

7.1.4. Առկա տեխնիկական հնարավորությունների սահմաններում ապահովել Ծառայությունից օգտվելու Բաժանորդի հնարավորությունը:

7.1.5. Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցներն՝ ապահովելու համար իր կողմից մատուցվող Ծառայության պատշաճ որակը:

7.1.6. Հասանելի դարձնել Պայմանագրի շրջանակներում մատուցվող Ծառայությունից օգտվելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը, կանոններն ու պայմանները:

7.2. Օպերատորն իրավունք ունի՝

7.2.1. Պայմանագրի կնքման օրվանից մեկ ամսվա ընթացքում միակողմանի հրաժարվել պայմանագրի կատարումից, եթե Բաժանորդին Ծառայության մատուցումը տեխնիկապես հնարավոր չէ:

7.2.2. Պայմանագրով սահմանված կարգով ինքնուրույն սահմանել և ժամանակ առ ժամանակ փոփոխել Ծառայության ցանկը, Սակագնային պլանները/փաթեթները, դրանց մատուցման պայմանները, կանոնները և սակագները:

7.2.3. Բացառիկ դեպքերում սահմանափակել կամ ընդհատել Ծառայության մատուցումը տեխնիկական սպասարկման, պրոֆիլակտիկ աշխատանքների կամ տեխնիկական խոչընդոտների ժամանակ ոչ ավել, քան ամսական 48 (քառասունութ) ժամ տևողությամբ, որոնց մասին Օպերատորը հնարավորության դեպքում ծանուցում է Բաժանորդին:

7.2.4. Միակողմանի կարգով հրաժարվել Պայմանագիրը կատարելուց, եթե Բաժանորդը չի վճարում Ծառայության համար ավելի, քան երկամսյա ժամկետում՝ ապամոնտաժելով Սարքավորումը և մալուխը: Սարքավորումը պատշաճ կերպով Օպերատորին հանձնելուց հետո Պայմանագիրը կհամարվի լուծված:

7.3. Բաժանորդը պարտավոր է՝

7.3.2. Ծառայությունից օգտվել ՀՀ օրենսդրությանը, Պայմանագրին և Օպերատորի կողմից հրապարակված այլ կանոններին ու չափանիշներին համապատասխան՝ առանց խախտելու և վնասելու երրորդ անձանց իրավունքները և օրինական շահերը:

7.3.3. Ծառայության դիմաց վճարումները կատարել ժամանակին և պատշաճ կարգով՝ անկախ վճարման եղանակից:

7.3.4. Ապահովել Օպերատորի աշխատակիցների մուտքը իր տարածք՝ Սարքավորումների միացման և դրանց սպասարկման պրոֆիլակտիկ աշխատանքներն իրականացնելու համար:

7.3.5. Օգտագործման իրավունքով իրեն տրամադրված վերջնական Սարքավորումը չտեղափոխել առանց Օպերատորի թույլտվության և օգտագործել այն բացառապես այն հասցեում, որտեղ տեղադրվել և կարգաբերվել են Օպերատորի մասնագետի կողմից, ինչպես նաև չվնասել սարքավորման վրա փակցված պաշտպանիչ թաղանթը:

7.3.6. Առանց Օպերատորի գրավոր համաձայնության Բաժանորդն իրավունք չունի երրորդ

անձանց ամբողջությամբ կամ մասնակիորեն, վճարովի կամ անհատույց փոխանցել Պայմանագրով իր կողմից ստանձնած իրավունքները և պարտականությունները:

7.3.7. Օպերատորի կողմից իրեն տրամադրված Սարքավորումը պահպանել պատշաճ և սարքին վիճակում, դրան վերաբերվել խնամքով, գերծ մնալ դրա ոչ պատշաճ օգտագործումից:

7.3.8. Ծառայության մատուցումը դադարեցնելու դեպքում, անկախ դադարեցման պատճառներից, Սարքավորումը, ինչպես նաև դրա պատկանելիքներն ու մասերը 5 /հինգ/

օրյա կամ Օպերատորի համար ընդունելի այլ ժամկետում վերադարձնել Օպերատորին սարքին վիճակում՝ հաշվի առնելով դրան բնական մաշվածությունը:

7.3.9. Փոխհատուցել իր կողմից Սարքավորմամբ անբարեխիղճ պահպանման, ոչ լիազորված վերանորոգման կամ այլ կերպ վնասելու հետևանքով Օպերատորին հասցված բոլոր վնասները:

7.4. Բաժանորդն իրավունք ունի՝

7.4.1. Օպերատորի կողմից սահմանված կարգին համապատասխան փոփոխել իրեն մատուցվող Ծառայությունների ցանկը և Սակագնային պլանները/փաթեթները, եթե այլ համաձայնություն գրավոր կերպով ձեռք չի բերվել Կողմերի միջև:

7.4.2. Միակողմանի կարգով հրաժարվել Պայմանագրից՝ այդ մասին առնվազն 7 (յոթ) աշխատանքային օր առաջ կամ Օպերատորի համար ընդունելի այլ ժամկետում գրավոր ծանուցելով Օպերատորին, մարելով Օպերատորի հանդեպ բոլոր պարտքերը և Օպերատորի աշխատակիցներին հնարավորություն ընձեռելով ապամոնտաժելու Սարքավորումները, եթե այլ բան համաձայնեցված չէ Կողմերի միջև:

8. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ, ԿԱՍԵՑՈՒՄԸ, ԴՆԴԱՐԵՑՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԱԿՏԻՎԱՑՈՒՄԸ

8.1. Օպերատորն իրավունք ունի կասեցնել, սահմանափակել կամ դադարեցնել Բաժանորդին մատուցվող Ծառայությունը՝ առանց այդ մասին վերջինիս նախնական ծանուցման, եթե Բաժանորդը՝

8.1.1. Պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել իրեն մատուցված Ծառայությունների համար,

8.1.2. օգտագործել է չսերտիֆիկացված և/կամ Օպերատորի Ցանցի հետ անհամատեղելի կամ Օպերատորի Ցանցի պատշաճ աշխատանքին խոչընդոտող սարք,

8.1.3. խախտել է Պայմանագրի պայմանները կամ գործող օրենսդրության պահանջները,

8.1.4. ոչ ճիշտ կամ ոչ ամբողջական տեղեկություն և/կամ փաստաթղթեր է ներկայացրել Օպերատորին,

8.1.5. Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները ոչ պատշաճ/ոչ բարեխիղճ է կատարել,

8.1.6. Սարքավորումն կորստի կամ հափշտակության դեպքում,

8.1.7. երրորդ կողմի պատճառով առաջացած ազդանշանների ուշացումների, դադարեցումների կամ կապի խզման դեպքում:

8.2. Բաժանորդն իրավունք ունի կասեցնել մատուցվող Ծառայությունը՝ Օպերատորին ներկայացնելով համապատասխան դիմում, եթե այլ բան նախատեսված չէ Կողմերի միջև: Ծառայության ժամանակավոր կասեցման ժամկետը լրանալուց հետո Ծառայության մատուցումը մեխանիկորեն վերսկսվում է՝ առանց Բաժանորդին նախնական ծանուցման:

8.3. Պայմանագրի շրջանակներում Ծառայության կասեցման ժամկետների գումարային տևողությունը մեկ տարվա ընթացքում չի կարող գերազանցել 60 (վաթսուն) օրը:

8.4. Ծառայության մատուցման կասեցման, սահմանափակման կամ դադարեցման դեպքում վերաակտիվացում և/կամ վերամիացում կարող է կատարվել Օպերատորի նկատմամբ ունեցած տույժերը, վերաակտիվացման համար գանձվող վճարը, եթե այդպիսիք հաշվարկվել են և Օպերատորի կողմից կատարված աշխատանքների դիմաց վճարներն ու այլ փաստացի կատարված ծախսերը Բաժանորդի կողմից վճարվելու դեպքում:

8.5. Բաժանորդի կողմից Ծառայության մատուցման համար վճարված գումարը վերահաշվարկի և վերադարձման ենթակա չէ, եթե այլ համաձայնություն գրավոր կերպով ձեռք չի բերվել Կողմերի միջև:

9. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

9.1. Օպերատորը պարտավորվում է գաղտնի պահել Բաժանորդի վերաբերյալ ստացված անձնական տվյալները, նրան մատուցված ծառայությունների տեսակի, ծավալի, վայրի, ժամանակի և այլ տեխնիկական պայմանների վերաբերյալ ցանկացած տեղեկություն, բացառությամբ այն դեպքերի, երբ դա պահանջվում է օրենքով կամ անհրաժեշտ է Օպերատորի իրավունքների պաշտպանության համար:

9.2. Բաժանորդին կամ վերջինիս անունից նոտարական կարգով հաստատված լիազորագրի հիման վրա հանդես եկող լիազորված անձին այդ տեղեկությունները կարող են տրամադրվել միայն նրանց կողմից տրված դիմումի հիման վրա, որի համար Օպերատորի կողմից կարող է գանձվել առանձին վճար:

9.3. Բաժանորդի կողմից ուղարկված և ստացված ողջ տեղեկությունը մասնավոր է և գաղտնի, այն ենթակա չէ հրապարակման՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

9.4. Ծառայության որակի բարձրացման, անվտանգության նկատառումներից ելնելով, Օպերատորի և Բաժանորդի զանգերի սպասարկման կենտրոնի աշխատակիցների հետ խոսակցությունները կարող են ձայնագրվել: Պայմանագրի կնքման պահից Բաժանորդը տալիս է իր համաձայնությունը ձայնագրման վերաբերյալ և ընդունում է, որ այդ ձայնագրություններն ապացույցի ուժ ունեն:

10. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

10.1. Սույնով Բաժանորդը տալիս է իր համաձայնությունը անձնական տվյալների մշակումն Օպերատորի կողմից իրականացնելու համար, ինչպես նաև Բաժանորդի՝ առանց վերջինիս ծանուցման, անձնական տվյալների փոխանցումը՝ ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս և Բաժանորդի վերաբերյալ տեղեկությունների բացահայտման դեպքում իրավունք չունի վնասների փոխհատուցում պահանջել:

10.2. Անձնական տվյալների մշակման իրավասություն վերապահվում է նաև՝

10.2.1. պարտապանների կողմից իրենց պարտավորությունների կատարման վերաբերյալ անձնական տվյալների մշակման, պահպանման և տեղեկատվության տրամադրում իրականացնող երրորդ անձանց,

10.2.2. Ծառայությունների դիմաց Բաժանորդի կողմից կուտակված պարտքը պահանջելու կամ դատական կարգով բռնագանձելու իրավունքը ստացած երրորդ անձանց,

10.2.3. իր մատակարարներին և ծառայություն մատուցողներին՝ Ծառայության մատուցման կամ իր գործունեությանը վերաբերող ուսումնասիրություն անցկացնելու համար,

10.2.4. վարկային պատմություն հավաքագրելու կամ վարկունակության գնահատում իրականացնելու համար լիազորված երրորդ անձանց,

10.2.5. իր բաժնետերերին, ներկայացուցչություններին, մասնաճյուղերին, դուստր և կախյալ ընկերություններին, գործընկերներին:

10.3. Անձնական տվյալների մշակումը Բաժանորդի անձնական տվյալների օգտագործումն է որոշակի միջոցառումների, գովազդների և գործողությունների իրականացման վերաբերյալ իրազեկմամբ՝ կապված անձնական տվյալների հավաքման, համակարգման, մուտքագրման, վերափոխման, փոխանցման, պահպանման, ուղղման, ուղեփակման, թարմացման, փոփոխման, օգտագործման, տարածման, ոչնչացման, այդ թվում՝ ապաստանականացման և բլոկավորման հետ, Բաժանորդի տվյալների օգտագործումը Բաժանորդին հաշիվ ներկայացնելիս, ինչպես նաև Բաժանորդի

տվյալների օգտագործումը՝ կապված նմանատիպ այլ տեղեկատվության տրամադրման հետ:

10.4. Բաժանորդն իրավասու է պահանջել փոփոխել իր վերաբերյալ անձնական տվյալները՝ գրավոր դիմելով Օպերատորին՝ ներկայացնելով պահանջվող անհրաժեշտ փաստաթղթեր:

11. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

11.1. Օպերատորը և Բաժանորդը պատասխանատվություն են կրում Դիմումով, Պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված իրենք պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

11.2. Բաժանորդն իրավունք չունի Օպերատորից պահանջել վճարել վճարված միջին ամսական գումարի՝ Օպերատորի մեղքով Ծառայությունից անուղղակի վնասները և բաց թողնված օգուտը:

11.3. Օպերատորի պատասխանատվությունը չի կարող գերազանցել Բաժանորդի կողմից փաստացի օգտվելու անհնարինության ժամկետին համապատասխան, համամասնորեն հաշվարկված գումարը:

11.4. Օպերատորը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց կողմից Ծառայության մատուցման ընթացքում խոչընդոտներ առաջացնելու համար, ինչպես նաև երրորդ անձանց կողմից Օպերատորի ցանցի միջոցով Բաժանորդին հասցված որևէ վնասի համար:

11.5. Բաժանորդին օգտագործման իրավունքով տրամադրված Սարքի, մալուխների, ինչպես նաև Սարքի տեղադրման/գործարկման, շահագործման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների վնասման կամ կորստի դեպքում Բաժանորդը պատասխանատվություն է կրում համապատասխանաբար վնասի կամ կորստի չափով:

11.6. Մինչև Բաժանորդագրության պայմանագրով ամրագրված ժամկետի ավարտը Օպերատորի Ծառայություններից հրաժարվելու դեպքում, Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին վճարել նախորդ ժամանակահատվածում վերջինիս կողմից մատուցած ծառայության արժեքը և Դիմումով սահմանված տուժանքը:

11.7. Սույն դրույթը կիրարկելի է նաև այն դեպքում, երբ Բաժանորդը ցանկանում է Պայմանագրի գործողության ժամկետում փոխել իր սակագնային պլանը՝ առավել ցածր վճարման պայմաններով սակագնային պլանի:

11.8. Բաժանորդը Օպերատորի և երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայություններից օգտվում է սեփական ռիսկով: Օպերատորը չի կարող որոշել Ծառայությունների համապատասխանությունը Բաժանորդի կարիքներին:

11.9. Օպերատորը պատասխանատվություն չի կրում.

- դժբախտ պատահարի կամ իր գործընկերների (այդ թվում՝ օտարերկրյա) կամ գործակալների միջոցով փոխանցվող ազդանշանների կամ մատուցվող ծառայությունների խափանման կամ դադարեցման հետևանքով առաջացած ընդհատումների, անջատումների, խափանումների կամ որոշակի տեսակի ծառայությունների, Սակագնային պլանների/փաթեթների մեջ կատարված փոփոխությունների համար,
- Բաժանորդին պատկանող համակարգչի/ների կամ այլ սարքավորման/ումների անսարքության պատճառով Ծառայության անպատշաճ մատուցման կամ ընդհատման համար,
- Ծառայության մատուցման ռեժիմի խախտման այն դեպքերի համար, որոնք Բաժանորդի կամ երրորդ անձանց գործողությունների հետևանք են, այդ թվում՝ Օպերատորի հետ

համագործակցող երրորդ անձանց կողմից Օպերատորին մատուցվող ծառայությունների անսպասելի դադարեցման դեպքերում,

• աշխատանքների, մասնավորապես՝ ընթացիկ, Ցանցի ամրապնդման, պահպանման, ընդարձակման կամ վերանորոգման հետևանքով առաջացած ընդհատումների և խափանումների համար, եթե դրանք չեն գերազանցում ամսական 48 (քառասունութ) ժամը,

11.10. Օպերատորը պատասխանատվություն չի կրում վճարումներն ընդունող միջնորդի կողմից սահմանված կանոնների համաձայն որևէ լրացուցիչ միջնորդավճարի գանձման համար:

11.11. Օպերատորը պատասխանատվություն չի կրում իր կողմից Բաժանորդին մատուցվող Ծառայությունը երրորդ անձի կողմից ցանկացած կերպ օգտագործելու համար:

11.12. Սույն Պայմաններով ստանձնած իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Օպերատորի համար միակ պատասխանատուն հանդիսանում է Բաժանորդը:

12. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

12.1. Այլ բան սահմանված չլինելու դեպքում Պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով:

13. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (\$ՈՐՍ-ՄԱԺՈՐ)

13.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են էլեկտրոնային հաղորդակցության և թվային համակարգերի ենթակառուցվածքների աշխատանքի խափանումը և (կամ) երրորդ անձանց կողմից Օպերատորին մատուցվող Ծառայության ընդհատումը, երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

13.2. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր ծանուցելով մյուս Կողմին:

14. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

14.1. Բաժանորդը դժգոհություններ կամ առաջարկություններ ունենալու դեպքում իրավասու է գրավոր դիմել Օպերատորին, ինչին Օպերատորը պարտավոր է որևէ կերպ արձագանքել այն ստանալու օրվանից 10 (տաս) օրյա ժամկետում, իսկ Բաժանորդի պահանջով, նաև դրանց գրավոր պատասխանել:

14.2. Սույն պայմանագրով ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ փոխհամաձայնության չհանգելու դեպքում, վեճերը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

15. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15.1. Օպերատորն իրավունք ունի ժամանակ առ ժամանակ սեփական հայեցողությամբ կատարել հրապարակային առաջարկ (օֆերտա) սույն Պայմանագրի պայմանները, այդ թվում կիրառվող Ծառայությունը, Սակագնային Պլանները/Փաթեթները, սակագները և վճարման կանոնները փոփոխելու մասին՝ այդ փոփոխություններն առնվազն 5 (հինգ) օր առաջ Օպերատորի վեբ կայքում հրապարակելու և Վաճառքի և սպասարկման սրահներում ներկայացնելու միջոցով և/կամ Օպերատորի կողմից ընդունելի այլ եղանակով համապատասխան ծանուցում տարածելու միջոցով:

15.2. Սույն պայմանագրի 15.1. կետի համաձայն առաջարկված փոփոխությունների հետ համաձայն չլինելու դեպքում, Բաժանորդն իրավունք ունի միակողմանի կարգով հրաժարվել մատուցվող Ծառայություններից՝ մինչև փոփոխություններն ուժի մեջ մտնելու համար նախատեսված ժամկետը՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Օպերատորին: Եթե Բաժանորդի կողմից այդպիսի գրավոր դիմում չի ներկայացվում Օպերատորին, և Բաժանորդը շարունակում է օգտվել Օպերատորի կողմից մատուցվող Ծառայություններից, ապա փոփոխություններ կատարելու մասին Օպերատորի առաջարկը կհամարվի համաձայնեցված Բաժանորդի հետ և վերջինիս կողմից գործողությամբ ընդունված (ակցեպտավորված):

15.3. Պայմանագիրը մեկնաբանվում է ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան: Սույն պայմանագրով չկարգավորված կողմերի փոխհարաբերությունները կարգավորվում են Օպերատորի հրապարակած հատուկ դրույթներով, կարգերով, կանոններով և/կամ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

15.4. Պայմանագրում Բաժանորդի համար բարենպաստ փոփոխություններ Օպերատորը կարող է կատարել առանց նախապես ծանուցման՝ փոփոխությունը կատարելուց հետո այդ մասին տեղեկացնելով իր վեբ կայքի և/կամ Վաճառքի և սպասարկման սրահների միջոցով:

15.5. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև կարող են սահմանվել լրացուցիչ այլ պայմաններ:

15.6. Պայմանագրի որևէ դրույթ անվավեր կամ առոչինչ ճանաչվելու դեպքում մնացած դրույթները չեն փոփոխվում և մնում են ուժի մեջ:

15.7. Պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, սակայն կարող է թարգմանվել և հրապարակվել (այդ թվում նաև սակագները, կանոնները և հավելյալ ծառայությունների համար գնացուցակը) նաև այլ լեզուներով, սակայն հայերենի և այլ տարբերակների միջև հակասության դեպքում կգերակայի հայերեն տարբերակը:

16. ԿԱՏԱՐՈՂԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կատարող

«Իքս-Թիվի» ՍՊԸ

Հասցե՝ ք.Երևան, Կոմիտաս 49/4

ՀՎՀՀ՝ 01280592

Հ/Հ՝ 2052822074501001 «Ինեկոբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Վ.Լալայան